

ՔՈՒՉԱԿԵԱՆ ՆՈՐ ՏԱՂԱՇԱՐՔ ՄԸ

Տաղաշարքը զոր կը հրատարակեմ՝ արտագրած եմ Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի թիւ 2323 ձեռագրէն:

Քուչակեան այս տաղաշարքը որ էլ է խորագիր չի կրեր: Անկէջ ինչ ինչ քառականեր հրատարակուած են Պ. Ա. Զօպանեանի «Նահապետ Քուչակի Դիւանը»-ին մէջ (Փարիզ, 1902) խրատական տաղերու շարքին, իսկ մնացեալները որքան որ գիտեմ անտիպ են. աչքի առաջ չունիմ Հ. Ն. Ակինեանի՝ Սիմոն Յակոբեանի Արեգներուն մէջ հրատարակածները:

Քուչակեան տաղերը շատոնց հոս ու հոն կը հրատարակուին, բայց երբեք չեն հրատարակուիր ձեռագրաց մէջ գտնուած շարքով: Պ. Զօպանեան «Անահիտ»-ի նոր շրջանի թիւերուն մէջ, իմ ձեռագրաց հաւաքածոյիս մէկ տաղարանին (1681էն) տաղաշարքէն եւ Տէմէ-ճեանի օրինակութիւններէն ընտրովին կը հրատարակէ, սակայն հոն չի պահուիր տաղաշարքին ձեռագիրը:

Ա. — Երկուս ի մէկ տեղ բերած, զերթ զնկեր կասեն թէ պահէ,
Ու չորս բնութիւն օտար հետ իրաց կասեն թէ սազէ,
Հինկ դուռն է ի բաց թողած, զայդ ամուր կասեն թէ փակէ,
Զիս հոգս ի յայտոց միջին, զերդ կրակ զմոմ կու հալէ:

Բ. — Զերկուսս ընկերանց պահեմ, մէկըս հող մէկըս հոգի է,
Հոգիս թէ ի վեր քարէ, հողըս ծանր ի վայր կու հակէ,

1. Հրատարակուած Նահապետ Քուչակի Դիւանը. Խրատական և Այլաբանական երգեր, Թիւ Է:
Զերկուսն ի մէկտեղ բերած զէտ ընկեր կ'ասեն թէ պահէ,
Ու չորս բնութիւն օտար հետ իրաց կ'ասեն թէ սազէ,
Հինկ դուռն է ի բաց թողած, զայդ ամուր կ'ասեն թէ փակէ,
Հոգիս իմաստնոց միջին զէտ կրակ որ զմոմն հալէ:

ներուն մէջ պահուած ձեռք որ բնագրի վերստացման ապագայ աշխատանքներուն համար կարեւոր է: Այս տաղերը որ իրապէս քառականեր են, երբեմն իմաստի տեսակէտով կը կազմեն շարք մը թէեւ քիչ շատ անկախ քառականերով, ըստ իս այս շարքերը կամ շարքը պէտք է պահպանել, եւ բնագիր մը պատրաստելու համար ասոնք կարեւոր են:

Ես՝ երուսաղէմեան այս տաղաշարքը՝ եղածին պէս կը պահեմ, ոչ մէկ յաւելում կամ յապսուում ընելով, միայն լուսանցքի տակ Պ. Զօպանեանի եւ իմ հրատարակութեանց անհամաձայնութեան պահուն՝ աւոր հրատարակածն ալ կը զետեղեմ, իմ կողմէս ակնարկութիւններով: Իսկ այն քառակաները որոնք լուսանցքին տակ ծանօթութիւն չունին՝ Քուչակի հրատարակեալ Դիւանին մէջ կը պակսին, եւ կրնան այլուր ալ հրատարակուած չըլլալ:

Վախեմ թէ հողոյս լսեմ, նայ հոգոյս լոյսըն պակասէ,
Ու հետ հոգոյն ու թռչի, երբ նորա տունըն հեռի է:

Գ. — Զայս չորս յիրար ոնց սազեմ, ամէն մէկ յինքն կու քարէ,
Զոր հողըս խռչկիկ առնէ, շուրջս գէճ կու ցրտացնէ,
Քամին զիս յերերը ունի, կրակի բոցըն կու վառէ,
Ընց գու սիրելի չարկամ, մէկ տեղով իսկի տեսիլ է:

Դ. — Հինկ դուռն է ի բաց թողած, թէ փակէ որ գող չմտնէ,
Այս բերդս է գանձով իլի, ու հազար չարկամ կու մըտնէ,
Զչարկամս ես ի յիս ունիմ, որ զդուռիս յերակ կու փակէ,
Թագաւորս որ ի ներս նստեալ, նայ զսայ էլ գողըն կու խաբէ:

Ե. — Խեղօքին հարցուկ եղան թէ զպատճառն ու իսկի գիտէ,
Աստուած է հոգին ստեղծել և ի հոգէ մարմին կապել է,
Կարծեմ վասն այն որ արար թէ ի վեր քարէն զնայ կարէ,
Կամ զհոգին մէջ մարմնոյն քան զխաւաս ոսկի նայ զուգէ:

Զ. — Աւաղ զայն որ շատ դատել մարդ չկայ որ զել աշխարհէն ճանաչէ,
Հաշուեց թէ մարգարիտ ունի ու յառջեւ խողին կու թափէ,
Խողըն ջաւհար երբ ճանաչէ զաւրն ի բուն զաղըն կու բորէ,
Կոխէ նայ զքո շոհարն դընչովն այլ զքեզ զիղէ:

Է. — Այլ աստուծոյ անունն որ զբարեաց դռներն է բացել,
Զաշխարհս է աղւոր ստեղծել և յերեք դիմաց բաժանել,
Զհրեշտակս ի յերկինս դրել և աղամայ զդրախտն է տնկել,
Զերկիրս զազանաց տուել, և անասնոց տեղի սայ շինել:

Ը. — Ի յերկնաւորաց դասուց սաղայէլ երես նայ շրջել,
Յերկնից ի յանդուռս անկեալ և ի լուսոյն խաւար մնացել,
Զաղամ ի դրախտէն հաներ և յանասնոց երկիր զնայ ձգել,
Ամենքս աղամայ որդիքս եմք յաւտար երկիրս բնակել:

1. Նահապետ Քուչակի Դիւանը, Թիւ Լ:

Զերկուս ընկերացն ասեմ, մէկն հող է, մէկն՝ հոգի.
Հոգին թէ ի վեր քաշէ, հողն ծանր ի վայր կու հակէ,
Վախեմ թէ հողոյս լսեմ մա հոգոյս լոյսն պակասէ.
Հետ հոգոյն, ամ, ու թռչի, երբ մորա տունն հեռի է:

2. Ն. Ք. Դիւանը, Թիւ ԿԱ. Ասոնք իրարմէ շատ տարբեր չեն, միայն Ա. տող վերջին մաս . . . զայդ ամուր կասեմ թէ քակէ, Գ. տող վերջին մաս . . . զդուռն զամէմն կու փակէ. Հրատարակութեանց Երազմուտիւնը հետզհետէ ցոյց պիտի տայ որ Երուսաղէմի այս տաղաշարքին ընթերցումները նախընտրելի են միւս օրինակներէն:

3. Ն. Ք. Դիւան, Թիւ Կ:

Աւաղ զայն որ շատ դատիս, մարդ չկայ որ զելն ճանաչէ,
Հաշուէ թէ մուրաբ ունի ի խողում առջեւ կու վաթէ,
Խողն զմուրաբն ո՞նց ճանաչէ, զորն ի բուն զաղըն կու փորէ,
Կոխէ մա զքո մուրաբն ու դնչով զքեզ կու զաղէ:

4. Ն. Ք. Դիւան, Թիւ ԾԳ. Ա. տող կը պակսի Օրհմեալ. Իսկ տարբերութիւն Գ. տող վերջը և Գ. տողը.

Աղամայ զդրախտն տուել,
Զերկիրս ամասնոց տըվեր, ամբամից տեղիք զսայ շինել:

5. Ն. Ք. Դիւան, Թիւ Ժ. Ա. և Բ. տողեր կը տարբերին.

Ի յերկնաւորաց դասում Սաղայէլ երես է շրջել,
Ի յերկնից յանդուռս է ընկել, ի լուսում մարմնում մնացել,

- Թ. — Ճանապարհորդ քեզ յայն ժամ ասեմ որ զճանապարհի հատըն գիտենաս,
Ծնել ես և յաշխարհս եկել տուր խաբար թէ ուտի կու գաս:
Եկել ես յաւտար երկիր մէկ ցուցու թէ յինչ կու կենաս,
Մեռնիս դու և ի հող մտնիս մէկ ասայ թէ յուր կու գնաս:
- Ժ. — Դու ըզքեզ ճանապարհորդ գիտես և ի ճանապարհէդ ի դուրս կու գնաս,
Սիրես մանկութեան անուն ու նասէֆ մանկանց չունենաս,
Ճանապարհս է բարակ ու նեղ դու խրվել ես զաչւիտ ու գնաս,
Քաղցր է մանկութեան անուն դու զլեղի և անհամ կու կենաս:
- ԺԱ. — Եղբայր սիրելի որդի որ յայս հողըս կու կենաս,
Յաշխարհս ես ի բան եկել զաչքդ բաց թէ յուր կու գնաս,
Խրատ մի քեզ տալ կամիմ զուգեմ աւղ քան զոսկի խալաս,
Սիրես և ի յականջդ ածես թէ դու զքո կեանքդ կամենաս:
- ԺԲ. — Դաւիթ արքային որդին Սողոմոն զայս մեզ կու ասէ,
Զխրատն իմաստնոյն դու տուր առաւել նա զքեզ սիրէ,
Թէ անգէտ ու անմիտ մարդոյն խրատ տաս նայ ըզքեզ ատէ,
Ու թուր ու դանակ առնէ ու թէ կարէ նայ զքեզ սպանանէ¹:
- ԺԳ. — Գանգատ եմ ու խոց եղբարք սիրտս ի վեր արիւն կու բերէ,
Ի մանկութեանէ ի վեր զիս ուսման հոգսն կու մաշէ,
Եկել եմ գերի անկել ճար չկայ որ մէկ մի գնէ,
Դատիմ զերթ զամէն մշակ նայ մարդ որ դեռ կու խոցէ²:
- ԺԴ. — Զորս բան առ խրատ յինէն որ զամէն աշխարհս քեզ ամէ,
Զայլոց մեղք դու մի քններ զքոյդ յերակ մտօքդ անտեճէ,
Զաստուած մօտ իքեզ դու տես սուղ մահու օրըն դու յիշէ,
Զխրատս ի սրտիդ տնկէ զքեզ յամէն չարէ սա պահէ³:
- ԺԵ. — Զքո մեղքն իսկի մի մոռնար որ խոնարհ զանձդ քո պահէ,
Զայլոց մեղք դու մի քններ որ աստուած զքեզ չդատէ,
Զաստուած թէ ի մօտ հայիս մեղքն իսկի ըզքեզ չխաբէ,
Ով որ զօր մահուն յիշէ զայս աշխարհս բնաւ չսիրէ⁴:
- ԺԶ. — Դաւիթ մարգարէն արքայն սիրելեացն ըզտէրն է գովել,
Ընցքան վայելուչ և աղւոր են եղբարքս ի մէկ տեղ եկել,
Քան զԱհարոն ի զլուսն որ ծաղկանց իւղովն էր աւծել,
Կամ ցօղն յահերմոն լերին և ի թարօր քաղցրիկ նայ ցօղել⁵:

1. Ն. Ք. Դիւան թիւ ԺԹ. Բուն նման իմ օրինակիս. տես անդ, ծան. թիւ 223.
2. » » » Ի. Գ. տող աստ ունի թափէ, և Դ. տող՝ իմ օրինակիս չունեցած կայ մը.
3. » » » ԻԱ. Աստ իմնէս կը տարբերի, սակայն Պ. Զօպանեան իր թիւ 225 ծանօթութեան
մէջ կը հրատարակէ երկու ուրիշ տարբերակներ՝ որոնցմէ առաջինը նման է իմ օրինակիս. միայն իմ Բ. տող
ունի սուղ մը միւսներուն մէջ պակտող և Դ. տողը կը բերջանայ . . . զքեզ ամէն չարեաց այս փրկէ.
4. Ն. Ք. Դիւան թիւ ԺԶ. Իմ Ա. տողս Պ. Զօպանեանի Բ. տողը եղած է, իսկ իր Բ. տողը՝ իմ առաջինս.
Գ. տող իմ՝ հայիս, հոն՝ տեսնուի. իսկ Դ. տող.
Ով որ զօր մահուն յիշէ մա զաշխարհս իսկի չսիրէ.
5. Այս տաղը թէև չկայ Ն. Ք. Դիւանին մէջ, սակայն տաղին մէկ մասը, այսինքն իմ վերջին երկու տողերը
խառնուել են ուրիշ քառերի մը, և կազմել են Պ. Զօպանեանի հրատարակած թիւ ԿԸ քառերի հինգ

- ԺԷ. — Զեր գալտ է բարի եղբարք որ ի յայս տեղիքս եք եկել,
Յաշխարհս ինք արտում ամէնքս ու խոցով մեր սիրտն է լցել,
Զեր խօսքդ մեզ դեղ եղաւ ձեր տեսովդ ենք մենք խնդացել,
Հազար երեսեկ այս աւուրս որ մէկտեղ ենք մեք ժողովել:
- ԺԸ. — Թագաւոր ու սուլդան և իշխանք որ ի բարձր աթոռ էք նստել,
Շատ ճորտ ու ծառայք և զօրք կան ի ձեր առջեւ կանկնել,
Ահեղ ու սաստիկ հրաման ու հանդէս էք դուր յաւրինել,
Ուղորդ՝ դատաստան արացէք զի ձեզ այլ ատեն կայ պահել:
- ԺԹ. — Հըզօր թագաւորք և իշխանք որ դարպաս էք դուր յաւրինել,
Զայլոչ ու պահնորդ դրել զձեր երեսդ ի մարդոյ պահել,
Գանգատ ու զրկած մարդիկ անճարակ են շատ շիւարեւ,
Դրէք միտ ու դատ արէք զերթ յաստուածմէն առ ձեզ եկել:
- Ի. — Մարդն որ սիրելիք ունի և ի նոցա միջէն բաժանի,
Հաշեց թէ ի մահ կերթայ և ի մարմնոյն շունչ կու քաղի,
Զերդ ձուկն ի ջրէն հանած նայ այլ ոնց կենայ կենդանի,
Ի բարկ կրակին դնեն խեղճ և ողորմ ինքն խորովի:
- ԻԱ. — Այլ ողորմ չեք տեսել թէ ունի մարդ շատ սիրելի,
Եւ ինքն ի նոցա միջէն կարաւորով ի բաց կու գատի,
Յորժամ աօն արեւը լինի կամ գատի կամ բարեկենդանի,
Ամէնքն են դրախտ ծաղկած նայ կտրած զերդ ճուղ մի ծառի:
- ԻԲ. — Շաղ ածես ի չորս իրաց այդ ցեղ շէնքդ ամուր չլինի,
Աւղըն հողուն ինչ նման հուրն ու ջուրն են խիստ ատելի,
Ի հակառակաց ստեղծած և եղած ես մարդ կենդանի,
Վերնա՝ օդն ու հուրն ու ջուրն և մարմին դառնայ փոշի:
- ԻԳ. — Մարդն որ շատ անդէճ լինի յաշխարհս հոգուն կու մաշի,
Շաքարն իւր լեղի թուի և լեղին իւրըն խըմելի,
Հով ջուրըն կրակ թուի և յահէն զերթ մոմ կու հալի,
Զգիր կեանքն դժար հաշուի և ի դժարին իսկի չհանկչի¹:
- ԻԴ. — Երնէկ ես նորայ ասեմ որ յաշխարհս ի սուր կու կենայ,
Զիւր մեղքն ի յիշումն աստուած է զօրն ի բուն նայ նստի ու լայ,
Արտասուենք սապոն լինի սեւութիւնըն սպիտականայ,
Թէ չէ օր հարսնիցըն գայ նայ հանդերձ հարսին չունենայ:

տողերէ բաղկացեալ իմ քառերիս տողերը կը գտնուին հրատարակուածին սկիզբի երկու տողերը, քիչ մը տարբեր սապէս.

Զիմչ զԱհարոնի զլուսն, որ ծաղկանց իւղովն օծեալ է,
Կամ ցօղն Ահերմոն լերին, Սուլաւ լիառն բուսեալ է,
Ոչ զարուսն ջուր կ'ուզէ, ոչ աշունն թոռմելու է,
Համցումն ծաղիկ ով տեսնը, զարարածս շէն կու պահէ.
Նորա ծաղիկ ով ասէ, երբ մորա ամուսն Յիսուս է:

Սկիզբի երկու տողերը վերջին երեք տողերուն հետ ո՛ր և է կապակցութիւն չունին, աւելի ճիշտ բնական-համար
ասեմ որ սկիզբի մէկ ու կէս տողը կը տարբերի վերջին երեքուկէս տողերէն, որ ամբողջանալու համար Ա. տողէն
կէս տողի պէտք ունի. Զիմ. գիտեր, արդեօք Պ. Զօպանեանի ուշադրութեան է վերայած այս մանրամասնութիւնը:

1. Ն. Ք. Դիւան թիւ ԼԶ. Տողերը ետեւ առաջ խառնուած են, ու վերի կարգը չունին. իմ զերթիս տեղ
անդ քանց. իմ լեղին իւրըն, անդ լեղին իւրըն. իմ օրինակս նման է ծան. թիւ 242ին օրինակին՝ անդ,
ԲԱԶՄ. ՀՈՒՍԵՄԵՐԵՐ - ՆՈՅՄԵՐԵՐ 1932

- ԻԵ. — Զաղըն զիմ բարի ասեն տէր Յիսուս որ զայս հրամայէ,
 Զանհամն ինքն ի համ բերէ ու զնեխածն անուշացնէ,
 Էնց մարդ որ նայ բան ունի կամ ուսումամբ կամի բնութիւնէ,
 Համեմ է հոգոց մարդկան ու զհիւանդ հոգիս բժշկէ:
- ԻԶ. — Զաղն անհամ ով է տեսել թէ լինի նայ պիտանացու,
 Ոչ աղբ է ի պարտէզ ձգելու և ոչ է քարինքն շինելու:
 Նման որ բանի տնտես և խայթող ունի զինչ մեղու,
 Պաշտօն յամենոց ուզէ չասէ զանձն իւր մահկանացու:
- ԻԷ. — Լաւ մարդ ես նորայ ասեմ որ բանա զքերանքն համով,
 Էնցեղ լեզուն զին չունի թէ լնան տուն մի ջաւհարով:
 Աստուած երբ զաշխարհս արար զհոգն ու զշուրն ու զօղն հրով,
 Մթխալ մաւելի չարար այլ կըրեալ զամէնքն չափով¹:
- ԻԸ. — Լեզուն է գործիք բանիւ արդարոյն զերդ խալաս ոսկի,
 Զմարդոյն է մէկ փէթ արեւ և աւձին է երկու ճղի:
 Էնց մարդն որ երկուս խօսի զմէկըն քաղցր ու զմէկըն լեզի,
 Օձին է եղբայր եղել ու զնորա անէծքն ընդունի:
- ԻԹ. — Ծառին տուղն երբ չար լինի ով մնայ թէ իսկի ծաղկի,
 Սպիտակ մազն որ սեւ ներկին ով մնայ թէ իսկի թափի,
 Բայց մարդ մեղաւոր ու սեւ ես գիտեմ որ կու սպիտակի,
 Աստուած մէկ բանիկ կուզէ որ մեղա ասէ ու քաւի²:
- Լ. — Կաֆայ մի կամիմ ասել որ արժէ ջաւհար մի բոլոր,
 Մարմինդ է ի նաւ նման խելքդ ծով թէ չունի ժըխոր:
 Զմիտքդ նաւավար դու տես որ բարձեալ է զանձ շահաւոր,
 Թէ յեզր ի ծովուտ հանես նայ առնէ ըզբեզ փառաւոր:
- ԼԱ. — Կանթեղին մտիկ արայ ջուրն ու ձեթն ու հուրն ի լարան,
 Կանթեղն մտաց նման ջուրն ուսման ձէթն գիտութեան:
 Քանի զմիտք ընդ սուրբ ունիս ու ջանիւ ես սիրող ուսման,
 Գիտուն է հոգիդ պայծառ որ լոյս տայ քեզ ի մթութեան³:
- ԼԲ. — Հաւատն է անառ բերդիկ ով առնէ ըզնա հայրենիք,
 Թէպէտ թշնամիք ունի որ բերեն շատ մրճեր ու նիգ:

1. Ն. Ք. Դիւան թիւ ԼԱ. Իմ օրինակս խառնուրդ մըն է Պ. Զօպանեանի հրատարակածին, նաեւ անոր
 թիւ 237 ծանօթութեան օրինակին:

2. Ն. Ք. Դիւան թիւ ԼԸ.

Ծառին ձիւղքն որ չոր լինի ո՞վ ասէ թէ ինքըն ծաղկի,
 Սպիտակ մազն որ թուի մերկի, ով ասէ թէ սպիտակի,
 Բայց մարդ մեղաւոր ու սեւ վկայեմ որ կու սպիտակի,
 Աստուած մէկ բանիկ կուզէ, որ մեղայ ասէ ու քաւի:

3. Ն. Ք. Դիւան թիւ ԽԱ.

Կանթեղիկ մտիկ արա, ջուրն ու ձէթն ու հուրն ի լարան,
 Կանթեղն է մտաց նման, ջուրն ուսման, ձէթն՝ գիտութեան,
 Քանի զմիտքդ սուրբ ունիս, դու սիրով ջանա՛ ուսման,
 Հոգիդ է պայծառ գումով, որ լոյս տայ քեզ մթութեան:

- Թուշման մի հեծել կանգնի ու լինի յինքն նետածիգ,
 Նայ զայն մասխարայ դնէ և բանքն զինչ ի խամայճիկը¹:
- ԼԳ. — Թէ դուն ի սրտաց իննիս նա այս կենաց այս յերակ խարոզ է,
 Աւուրբ մը խնդալ կուտա բայց յերակ ի լաց կու պահէ,
 Այն մարդն որ աւտա սմայ կամ աստեն իւր տուն կու շինէ,
 Զաւտամ թէ նայ խելք ունի աւտա որ խիստ յիմար է:
- ԼԴ. — Թէ ուզես որ հանկչիս եղբայր անդենին դարպաս դու շինէ,
 Զհիմն հաւատոյ դու դիր որ յերակ անշարժ կու պահէ:
 Զինչ որ քեզ բաժին հասնի անդէնին դու զայն յուղարկէ,
 Յորժամ քո տուն երթաս նայ բարով քան զնուռն ի լին է:
- ԼԵ. — Զով որ կու սիրէ աստուած նայ սակաւ մի աստ կու տանջէ,
 Փորձէ թէ նա սէր ունի առ աստուած չարին համբերէ:
 Թէ զսէրն ի սրտաց ունի առ աստուած խիստ յօժար է,
 Տանջանքն թուի նմա թէ իւղով զանձն կաւճանէ²:
- ԼԶ. — Ով իմ խրատիս լսէ նայ զանանց բարին ժառանգէ,
 Անդէն պարզ երես լինի յամեքէ իսկի չամաչէ,
 Յորժամ յարութիւն լինի փողն երկու ձայնիւ տի գոչէ,
 Ով ասդէն ճարտար կացեր նա զեկայք ձայնն տի լսէ³:
- ԼԷ. — Աշխարհս է ի ծով նման ով որ զայ անթաց չի մնայ,
 Յայս ծովս ես ի նաւ նստայ գնաց նաւս ու ես չիմացայ:
 Յեզեր մօտացել եմ ես կու վախեմ՝ քարի դիպենա,
 Քակտի իմ աղւոր շինւածս ու տախտակս մէկմէկանայ⁴:
- ԼԸ. — Աստուած ի կուսէն ծնեալ կոյսն անրողջ և սուրբ մնացեալ,
 Հինկ սքանչելեալք անճառ որ մարդկան անհաս երեւեալ:
 Ի մի ենթակայ եկեալ հուրն աստուած և հոգն եռացեալ,
 Մարմին և ստեղծողն երկնից նոր խառնեալ յոյժ միացեալ:
- ԼԹ. — Զաջն աշխարհաստեղծ եղեալ ի խաչին զթեւն տարածեալ,
 Ոսկըր ջլապատ և մորթ թանձր աստուած ի փայտ բեւեռեալ:

1. Ն. Ք. Դիւան թիւ Դ.

Հաւատն ամառիկ բերդիկ, ո՞վ առնէ զմա հայրենիք,
 Թէպէտ թշնամիք ունի որ բերեն ինձ շատ մրճեմիք
 Թշնամին հեծել կապէ կու լինայ ի մա մետածիգ.
 Նա զմա մասխարա դնէ քանէ զէտ դիմածիք:

2. Ն. Ք. Դիւան թիւ Զ.

Զով որ կու սիրէ Աստուած, սակաւիկ մի աստ կու տանջէ,
 Թէ սէր ի սրտաց ունի, առ Աստուած չարիմ համբերէ,
 Թէ փորձէ մա սէր ունի առ Աստուած, մա խիստ յօժար է,
 Տանջանք կու թուի մմա, թէ իւղով զանձն կ'օծանէ:

3. Ն. Ք. Դիւան թիւ Թ. Իմ ժառանգէ, անդ՝ վայելէ. Իմ չամաչէ, անդ՝ չվախէ. Իմ լինի, անդ՝
 երթայ:

4. Ն. Ք. Դիւան թիւ ԿԴ. Երկտան քառակիս միայն Բ քառակիս վերջին երկու տողերը նման են իմ
 քառակիս վերջին երկու տողերուն: Ծանօթութեան մէջ, թիւ 272, կայ ամբողջ, Պուրի կարծեցեալ տաղաշար-
 քին մէջ, թիւ ԿԴ, Բ տունը ըստ իս երկու տաղերու խառնուրդ մ'է, Պ. Զօպանեանի ուշադրութեան վրիպած:

կող նորա հերձեալ ջուր և արին ըզմեզ նորոգեալ,
Եթն անգամ ձայն անեալ որ զեւթեանց կենցաղս յաւրինեալ:

Խ. — Ահեղն աստուած մարդ եղեալ նմա պարտէր զայս ներգործել,
Արեամբն աստուծոյ ըզմեզ ի մեղաց սրբել և ազատել,
Ձմարդիկը մահու գրաւել ի յերկինս և ի գլեհանս հրաւիրել,
Հրեշտակաց ընկեր առնել զնա արհնել և փառաւորել:

ԽԱ. — Ձարեւն ի յերկինս մայ և լուսոյն նա զարդ չու արայ,
Որպէս որ ճարակ չկայ ի նիւթոյն լոյսն որ հեռանայ:
Յորժամ արեւն երթայ լոյսն անճառ աղբիւր ցոլանայ,
Հուրն և ճառագայթն և նիւթն միացեալ որ երկու չէ նայ:

ԽԲ. — Այսպէս ի քրիստոս ասայ դաւանումն է սիրտ հաւատա,
Եւ մի լինիցիս թերի դու տըղա տիմար և անիմայ:
Ստեղծող է քրիստոս և լոյս և աշխարհիս տէր անտարակոյս,
Հոգի ու մարմին ու միտք որ եղեւ փրկիչ գերելոյս:
Թէ չէր միացեալ հոգոյս ընդ բանին աստուած մեռելոյս,
Ապայ զկապանն ով լուծէր երբ չկայր մեզ ելնելու յոյս:

ԽԳ. — Արիք ի ծովափք իջնանք ու ձկներ բռնենք վարըմով,
Առնունք և ի տուն տանենք խորովենք զինքն կրակով:
Ձկնիկն ընդ իս էնց ասաց թէ լցաւ սրտիկս արինով,
Երբ ես յարեւէս ելայ թող ցամքի զինչ գետ կա ու ծով:

ԽԴ. — Ձինչ որ ես հետ ինձ արի չէ արել այլ աղամորդի,
Որ շիշ մի հալած ոսկի ի տետինն ի վայր թափեցի:
Հազար ձի վազան բերի վազցուցի մէկ չի հասուցի,
Ինչ շահ է յետին խելացս երբ առաջին անունն աւերի:

ԽԵ. — Շատ թագաւորաց մեծաց և իմաստուն արանց լսեցի,
Յայն չափ չի կշտանայ մարդն աստընւորով մինչ որ մեռանի:
Տանին գերեզման դնեն հողով իւր աչքն լըցուի,
Ապա իւր լեզուովն ասէ թէ հերիք է այլ չի պիտի:

ԽԶ. — Իմ սիրտ վատին մի լսեր ու չարին տեղ իսկի մի տար,
Յայստընւորիս վերայ վատն իսկի մարդոյն չի մնար:
Այն մարդն որ ինքն վատ առնէ հանդիպի վատի մի նա այլ,
Ու զինչ որ ունի ամալ գայ ի յոտքն փաթթի նայ այլ:

1. Ն. Բ. Գիւան թիւ ԼԵ. Այս քառեակը կը տարբերի Պ. Զօպանեանի օրինակէն, նաեւ թիւ 241 ծանօթութեան մէջ հրատարակուածն որ աւելի մօտ է իմինիս:

2. Ն. Բ. Գիւան թիւ ԼԵ. Այս տողին սկիզբի տողը նման է իմինիս, իսկ մնացեալները՝
Որ շիշ մի զալան ոսկի ի գետին ի վայր վաթեցի,
Հազար ձի վազան բերի, վազցուցի, այլ ոչ հասուցի,
Յետի խելքն ես ինչ ամեմ երբ առջի ամուսն աւերի:
Նոյնին երեք փոփոխակները հրատարակուած, անդ ծան. Թ. 243. Այս քառեակներն անշուշտ պիտի մամբ նուիրուած են Պլուզի, Ֆրիկի և ուրիշներու: Նման սխալ հեղինակութիւններ բազմեց և ամէն տեղ կայ մեր մատենադրութեան և տաղասացութեան մէջ:

ԽԷ. — Տեսայ զիմ հոգոյս հոգին որ մեռաւ ի հող թաղեցաւ,
Դարձեալ իմ սիրտս համար նայ հարեալ ու շատ դատեցաւ:
Ի սուր և ի կտուր երեկ ու քարով նա քարկոծեցաւ,
Ի հուր և ի գեհն մտաւ իմ հոգոյս հոգի ջանեցաւ:

ԽԸ. — Երկուս ընդ իրար կռւին մէկ ի մէկ չնմանին,
Մէկեւ ի նոցա մէջին էր մեռած և անգած ի տեղին:
Այլ որ զկռւին արին շատ արին ի վայր թափեցին,
Ի ի յայն արինէ ցաւդին շունչ տուաւ անկած մեռելին,
Ծեր մայլ բարեխաւս բերին որ եպագ գերես մեռելին,
Եւ յայն համբուրէ ծերին լոյս ծագեաց մթան գիշերին:

ԽԹ. — Յանիրաւ մարդոյն ի գատ կաց ու հեռի,
Թէ քեզ հայր է կամ եղբայր ու կամ քեռի:
Հետ փշին մի փաթաթիր զինչ հետ ուռի,
Թէ չէ ի ձեռքդ բեւեռի և խոց լինի:

Կ'աւարտեմ այս տաղաշարքը, ուր որոշ կ'երեւի այս քառեակներուն բնական խորքը: Անոնք անշատ քառեակներու պատկանիլը: Անոնք անշատ քառեակներ են, բայց ոչ բոլորովին իրարմէ անկախ: Եւ այդ պատճառաւ իսկ պէտք է անոնց բնագիրները կամ օրինակներուն ներքեւ տեղադրելու պէս հրատարակել, եւ յետոյ կատարել կարեւոր դիտողութիւններ: Մինչեւ ցայժմ Քուչակի քառեակներուն համատարակիչները իրենց դատողութեան համաձայն խմբաւորումներու վերածած են Քուչակեան քառեակները, եւ այդպէս ալ հրատարակած. ատիկա բուն բնական աշխատութեանց եւ բնագրին կազմութեան համար անարժէք կը նկատեմ, քանի որ կարծիքներ եւ դատողութիւններ կրնան ինտերոյ նիւթ ըլլալ եւ իրարմէ տարբերիլ, մանաւանդ բնագրին հետ որ եւ է կապ չունենալ:

Տաղաշարքս որ հանդիպածներուս մէջ երկարագոյններէն մին է, ցոյց կու տայ որ անոնց հեղինակը զանոնք որոշ կարգով մը իրարու ետեւէ շարած է: Օրինակ, վերի տաղաշարքիս մէջ Սիրոյ քառեակներ բնական, եւ ալ աւելի վերլուծական տաղեր են, կրօնական հասկացողութեամբ եւ վիճաբանութեամբ, այլաբանական պատկերներով որոնք ժողովրդական եւ ժամանակին գործածական ըլլալով հանդերձ, հեղինակէն

առնուած եւ քիչ կամ շատ ինքնատուրած եւ թեամբ զարդարուած գործածուած են:

Անոնք ժողովրդական հեղինակութիւն չեմ նկատեր, այլ որոշ մէկ հեղինակի մը արտադրութիւնն են, որոնք ժողովուրդէն արտաբաց ընդունուած եւ աւատօրէն գործածուած, այնքան յաճախութեամբ որ գրեթէ ժողովրդականացած են, երեւոյթ մը որ պատահած է ու կը պատահի միշտ: Ով որ ալ եղած ըլլայ հեղինակն այդ տաճերուն՝ սա որոշ է որ մէկ հատ էր, իր նկարագիրը որոշ կ'երեւի իր քառեակներուն մէջ, որոնք՝ հակառակ ժողովուրդէն իւրացուած եւ փոփոխակներու ենթակուած ըլլալուն՝ դարձեալ պահած են հեղինակին ինքնատիպ գծերը: Այդ գծերը երբեմն հակասող են, բայց ատիկա իսկ ցոյց կու տայ իր միակ հեղինակութիւն մը ըլլալը: Նոյնիսկ Օմար Խայեամ ինքնիրեն կը հակասէ: Ասիկա անխուսափելի է բոլոր ներշնչուած նիւթերու համար, ներշնչումը շատ անգամ դատողութենէն անջատ է: Այս պատճառաւ իսկ այս քառեակներուն հեղինակը, որոնց Քուչակի քառեակներ կասկածելի անունը տուած ենք ու կու տանք, շատ անգամ դատողութենէն հեռացած է եւ մղուած է միայն արձագանգ ըլլալը իր աւանդապաշտութեան, սրտին, զգացումներուն եւ միւս ներշնչող աղբիւր:

ներուն: Իր զգացումները զորս երբեմն
դատողութեան հետ ալ միացած կը գրու-
նեմ, եւ քողածածուկ, ոչ յանդուգն, քիչ
մը հեգնական ընդվզումով զոր միշտ զսպել

կ'աշխատի, կ'երեւի հոս ու հոն քառեակի
մը վերջին տողին մէջ: Առ այդ օրինակներ
չեմ բերեր, միայն ուշադրութեան կը յանձ-
նեմ իր մէկ քառեակը.

Ճանապարհորդ քեզ յայն ժամ ասեմ որ զճանապարհի հատըն գիտենաս,
Ծնել ես ւ աշխարհս եկել տուր խաբար թէ ուստի՞ կուգաս:
Եկել ես յաւտար երկիր մէկ ցուցու թէ յինչ կու կենաս,
Մեռնիս դու ւ ի հող մանկա մէկ ասայ թէ յո՞ւր կու գնաս:

ասկէ զատ շատեր կան, տող մը, բառ մը՝
ուր դատողութիւնը կու գայ խայեամի պէս
հարցնել մինչեւ անպատասխան յուսահա-
տիլը ու վայրկեան մը միայն յոգնելէ վերջ
նուիրուիլ կրօնքին, աւանդութեանց առ-
այդ տուած պատասխաններով համոզման:
Ասիկա երեւոյթ մըն է որ ժողովրդական
ստեղծագործութեան մէջ պիտի չերեւար.
վասն զի ժողովուրդը հաւատքը խնդրոյ
նիւթ չ'ըներ ունենալով Աստուած կամ
աստուածներ պիտի գոհանար ուրկէ՞ գա-
լու, ինչո՞ւ համար կամ ո՞ւր երթալու պէս
յաւիտենական ու խորհրդաւոր հարցում-
ներուն՝ ունեցած հաւատքով եւ աւանդու-
թիւններով:

Այս քառեակները որ Պարսիկ տաղա-
սացութեան մասնիկներու հայացած ձեւերը
կը ներկայացնեն, արտադրութիւնն ըլլալու
են թ. Կամ թ. Դարու հեղինակի մը: Հե-
ղինակի մը՝ սիրուած, ժողովրդական, որ

վարժուած էր կրօնական դպրութեան մէջ,
փորձուած կեանքին մէջ, նաշակած անոր
դառնութիւնները, արար աշխարհ տեսած,
իր երկրին ու ազգակիցներուն վարք ու
բարքին մօտէն եւ լաւատեղեակ: Վերջա-
պէս միամիտ աշուղ մը չէ ան, այլ իրապէս
խորհող գրող մը, որ կրնայ վերլուծել, մեկ-
նաբանել կեանք, կրօնք, զգացում:

Այս քառեակները վերջապէս աղբիւր
են Հայ ազգագրութեան, լեզուաբանու-
թեան, առակախօսութեան եւ նաեւ ար-
հեստի ու արուեստի ուսումնասիրութեան
համար: Նիստ ու կաց, կահկարասի, գոր-
ծիքներ եւն. հոն բազմիցս կը յայտնուին,
որոնցմէ կարելի է օգտուիլ ուսումնասի-
րութեանց համար:

Ուրիշ տաղաշարքներ ալ ուրիշ առթիւ:
Կը շարունակեմ զանոնք Քուչակեան ան-
ունել միայն հետեւելով ընդունուած կա-
նոնին:

1932, Wichita, Kansas. U. S. A.

Յ. ՔԻՐՈՍՏԵԱՆ



ՕՐՈՒԱՆ ԳՐԵՐ

«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ»

Վան - Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի
տասնհինգամակին առթիւ (1915 - 1930). հեղինակ՝
ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ. 413 էջ «Բազմավէպ»ի ծաւալով.
դին. 2 տուար. Տպ. Մխիթարեան, Վենետիկ - Ս.
Ղազար.

Վասպուրականի հերոսամարտին գրա-
կան յուշարձանը, որուն վարպետ ճար-
տարպետն է բանասէր ազգագրագէտ
Հայկ Աճէմեանը, ձօնուած է յիշատակին
անոնց, որոնք ընկան հայրենիքի ազա-
տութեան ճանապարհին: Վասպուրականցի
հերոսներու գերազանցապէս աննման հե-
րոսամարտի համայնապատկերը քանդակ-
ուած է հոն: Յաղթանակի և պարտու-
թեան շարժանկարը իր շողերով, իր ըս-
տուերներով պատմութեան հարազատ
ճշմարտութեան հաւատարիմ մնացած է:

Ա

Երկու պատկերներ գրքին մուտքին
կանգնած են, Հայրիկ՝ յեղափոխութեան
հաւատքով սպառազէն, Անդրանիկ՝ հայ
յաղթանակներու վստահութեամբ ամրա-
պնդուած:

Վասպուրականի շողին, խունկին, ծաղ-
կին ու արեւին լեզու ու երգ տուող Չի-
թունին քեզ կը համոզէ որ նմանը չկայ
Վասպուրական մեր աշխարհին: Բոլոր
դրախտներու համախումբ պարտէզն է...
Վասպուրական մեր աշխարհը, ուր ամէն
բան խաչ, շէն ու ջուր է հայաշունչ, ուր
ամէն տունկ ու այգի դրախտագեղ, ծառ
ծաղիկներովը խօրօտիկ: «Չայն տուր, ո՞վ
ծովակ, ինչո՞ւ լռում ես...». ինչո՞ւ կը
լռես, պատմէ վանայ քաղաքին օրհնած
գեղեցկութեան պատմութիւնը: Չիթունին
ազգագրական կերպասին վրայ կը թըր-
թոացնէ իր վրձինը և կը նկարէ վանայ
ու Վասպուրականի լուսապսակ պատկե-

րը, օրրան ու բեմ հայ ցեղի նախահայ-
րերուն:

Արմենակ փոխարեան մանրամասնօրէն
կը գրէ վանեցիներուն ռազմական պա-
տրաստութեան պատմութիւնը: Հարկ է
անաչառօրէն և առանց դիտումներու և
նախապաշարումներու կարգալ «Վասպու-
րական»ը. փոխարեան իր պատմութեան
մէջ անխտիր կը յիշէ հայ կուսակցութեանց
անձնուէր գործունէութեան նկարագիրը:
Վանեցիներուն կ'աջակցին ուրիշ գաւառ-
ներէ հասնող վարիչներ և գործիչներ:
Վռամեան, Արամ ու Իշխան դիւանագէտ
դիտումներով հալածանքէն առաջ հայ ե-
րիտասարդութիւնը Ռուս ճակատին դէմ
կը մղեն, զանոնք կը զինեն և թուրք
բանակին կ'օգնեն: Ճէվտէթ, Վանի հայ-
ատեաց թուրք կուսակալը չկրցաւ օգտուիլ
հայ կտրիճ ռազմիկներէն. և նենգութեամբ
մորթեց հայ գործիչներու վարչապետ Իշ-
խանը և Վռամեանը: Ասով հանդերձ հայ
կուսակցութեանց ռազմիկները առանց
վարանումի, զէնք ձուլեցին, թնդանօթներ
ձուլեցին և ճակատամարտ մղեցին թուրք
բանակին դէմ:

Հաւասարակշռութիւն չկար այդ երկու
թշնամի բանակներուն մէջ. հայուն կա-
տարածը իսկապէս դիւցազնութիւն էր:
Վանեցին ամէն գնով կ'աշխատէր վանն
ու Վասպուրականը պաշտպանել: Պէտք է
խոստովանիլ որ շնորհիւ հայ յեղափոխա-
կան գործիչներու՝ Հայաստանի այդ դրախ-
տանման երկիրը յառաջադիմած էր ամէն
տեսակէտով. Օսմանեան Սահմանադրու-
թենէն քիչ առաջ և վերջը այդ գաւառին
մէջ կը հրատարակուէին խմորատիպ թեր-
թեր՝ «Նոր-Սերունդ», «Հայկացք», «Ծո-
վակ», «Կուչակ», «Երկունք», «Զգոտում»,
«Գաւառի Չայն», «Տիգրիս», «Աշխա-
տանք», «Վան-Տոպ»։ ունէին գրադա-
րաններ՝ «Հայրիկեան», «Աշխտիսեան»,
«Մարտիկեան», «Ախպեր», «Ռաֆայէր»,
«Շատախ», «Երկար»: Կուսակալ Ճէվտէթ
չար աչքով կը դիտէր հայ մտքի այդ յե-
ղաշրջումի պատկերը. սաստելու համար,
նախ քան մեծ աղէտը՝ մէկ քանի հայե-